

Արագածոտնի մարզպետն ընդունեց Ֆրանսիայի դեսպանին

13.02.2014



Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանն ընդունեց Հայաստանում Ֆրանսիայի դեսպան Անրի Ռենոյին: Ընդունելությանը ներկա էին փոխմարզպետ Նունե Մովսիսյանը, մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Հրաչյա Գեւորգյանը, Աշտարակի քաղաքապետ Արմեն Անտոնյանը: Ողջունելով մեծարգո հյուրին, մարզպետը նշեց, որ Արագածոտնի մարզը Ֆրանսիայի հետ բարեկամության լավ ավանդույթներ ունի: Տարիներ շարունակ արդյունավետորեն ընթանում են փոխգործակցության ծրագրերը Թալին և Բուրգ Լե Վալանս քաղաքների, ինչպես նաև Օշական գյուղական համայնքի և Ալֆորվիլ քաղաքի միջև: Նա նշեց այդ ասպարեզներում ունեցած ձեռքբերումները և առաջիկա գործնական ընթացքը: Առանձնակի կարեւորվեց, որ մարզի 32 դպրոցում ուսուցանվում է ֆրանսերեն լեզուն:

Մարզպետը նաև անդրադարձավ հայ և ֆրանսիացի ժողովուրդների բարեկամությանը, կարեւորելով, որ այն հաստատուն հիմքերի վրա է դրված՝ շնորհիվ մեր երկրի նախագահ Սերժ Սարգսյանի մոտեցումների:

Ներկաների կողմից քննարկվեցին երկուստեք հետաքրքրող հարցեր: Դրանք, մասնավորապես, վերաբերում էին կրթական ծրագրերին, համայնքների միջև նոր համագործակցության հնարավորություններին:

Շնորհակալություն հայտնելով ընդունելության համար, Անրի Ռենոն ասաց, որ Արագածոտնի մարզը Հայաստանի ամենագեղատեսիլ բնակավայրերից է: Նա հիացած է այստեղի հրաշալի բնությամբ, բարձրաբերձ լեռնաշղթաներով, անդնդախոր կիրճերով և դրանց վրա կառուցված պատմամշակութային հուշարձաններով, եկեղեցիներով, ամրոցներով: Նա գոհունակություն հայտնեց իր երկրի հանդեպ մարզում դրսևորած հետաքրքրության և առկա գործնական կապերի համար: Մարզպետի և դեսպանի միջև պայմանավորվածություն ձեռք բերվեց առաջիկա համագործակցության, համատեղ ծրագրերի իրականացման համար:

Մարզի ղեկավարության ուղեկցությամբ դեսպանը նաև այցելեց Կաթնաղբյուրի դպրոց, ուր ուսուցանվում է ֆրանսերեն լոզուն և եղավ Բյուրականի աստղադիտարանում: